ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հունիսի 2022թվականի N 41

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով, և հիմք ընդունելով Լոռու մարզպետի 2022 թվականի մայիսի 20-ի թիվ 02/107,3/04506-2022 գրությունը

ո ր ո շ ո ւ մ ե մ՝

1. Համայնքի տնտեսական զարգացման պատասխանատուի գործառույթները դնել առաջատար մասնագետ-ֆինանսիստ Հասմիկ Ղազինյանի վրա:
2. Առաջատար մասնագետ-ֆինանսիստ Հասմիկ Ղազինյանի պաշտոնի անձնագրի «Իրավունքները և պարտականությունները» բաժնում ընդգրկել ներկայացված գործառույթները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՉԻՉՅՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Ֆիոլետովո, (0322)68941, fioletovo.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒՆԻՍ 2022 թվականի N 42

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 42 և 43 հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքով, հիմք ընդունելով հողամասի համասեփականատերերի դիմումները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 30052022-06-0055 վկայականը, օրինականացման համար սահմանված վճարների անդորրագրերը.

Որոշում եմ

1. Մարզ Լոռի, Ֆիոլետովո համայնքի 2-րդ փողոց 332 բնակելի տան, 06-113-0008-0010 ծածկագրի տակ գտնվող 0.20561 հա համասեփականության իրավունքով պատկանող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում առկա ինքնակամ կառուցված՝ 2019թ. 68,3 քմ մակերեսով անասնաշենքը, 2005թ. կառուցված՝ 30,8 քմ մակերեսով ավտոտնակը և 2019թ կառուցված՝ 2,89 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական և գրանցել՝ Մորոզով Վասիլի Միխայլովիչ, Մորոզովա Նատալյա Ալեքսեենա, Մորոզով Վլադիմիր Վասիլևիչ., Մորոզովա Տատյանա Վասիլևնա համասեփականատերերի անվամբ:
2. Վերը նշված կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար սահմանված՝ անասնաշենքի, ավտոտնակի և պարիսպի մասով՝ 62908 ՀՀ դրամ, վաթսուն օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունիս 2022 թվականի N 43-Ա

ՀՈՂԱՄԱՍԻԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 08.04.2004թ. թիվ 443-Ն որոշմամբ, , ՀՀ հողային օրենսգրքի 31-րդ հոդվածով, հիմք ընդունելով որակավորված չափագրող «ԱՐՄԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ» ԱՁ-ի կողմից չափագրված հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Ֆիոլետովո համայնքի վարչական տարածքում ընդգրկված ՀՀ կառավարության 08.04.2004թ. թիվ 443-Ն որոշմամբ համայնքային սեփականություն հանդիսացող 06-113-0109-0004 ծածկագրի 0.385527 հա., 06-113-0109-0018 ծածկագրի 0.152617 հա., 06-113-0109-0004 ծածկագրից 0.897960 հա. գյուղատնտեսական նշանակության վարելահողերի միավորման մեկ միավոր 1.436104 հա., սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի և տրամադրել համայնքային սեփականության վկայական:
2. Որոշումը ենթակա է գրանցման ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՉԻՉՅՈՎ